

հետևի հատվածում կամ Ջոզեֆ Սմիթի թարգմանության հատվածում, որը գտնվում է Gospel Library հավելվածի «Ուսումնասիրության օժանդակ նյութեր» բաժնում: Իմացեք, թե ինչպես օգտագործել այս նյութերը՝ ուսումնասիրելով ստորև բերված օրինակը և բացատրությունը:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՋՈՋԵՖ ՍՄԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ

Հետևյալն ընտիր հատվածներ են Աստվածաշնչի՝ Հակոբ Թագավորի Տարբերակի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից (ՋՄԹ): Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ վերականգնի Աստվածաշնչյան ձեռագրի ճշմարտությունները, որոնք կորել կամ փոփոխվել էին քնագրի ձեռագրերը գրելուց հետո: Այդ վերականգնված ճշմարտությունները պարզեցնում են վարդապետությունը, և զարգացնում սուրբ գրքերի ըմբռնումը: Հատվածները, որոնք ընտրվել են Ուղեցույցի համար, կօգնեն ձեզ զարգացնել սուրբ գրքերի ըմբռնումը, անկախ այն բանից, թե որ լեզվով է թարգմանված:

Քանի որ Տերը Ջոզեֆին հայտնել է որոշակի ճշմարտություններ, որոնք մի ժամանակ գրել էին քնագրի հեղինակները, Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը նման չէ աշխարհում գոյություն ունեցող Աստվածաշնչյան որևէ այլ թարգմանության: Այդ իմաստով, *թարգմանություն* բառն օգտագործվում է սովորականից ավելի լայն և տարբեր իմաստով, քանզի Ջոզեֆի թարգմանությունն ավելի շատ հայտնություն էր, քան բառացի թարգմանություն մի լեզվից մյուսը: ՋՄԹ-ի մասին լրացուցիչ տեղեկությունները համար, տես «Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՄԹ)» բառահոդվածը՝ ուղեցույցի այբբենական կարգով թվարկված քեմաներում:

Հետևյալ լրատվանումը ցույց է տալիս ՋՄԹ-ի ընտրանիի մի օրինակ.

Թավ տանելով այս հղումը Հակոբ Թագավորի Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից է: Քանի որ նրա թարգմանությունն Աստվածաշնչի տեքստում բառեր է վերականգնել, հատվածների թվերը կարող են տարբերվել այն հրատարակությունից, որը դուք օգտագործում եք:

ՋՄԹ, Մատթեոս 4.1, 5–6, 8–9
(համեմատիր Մատթեոս Գ.1, 5–6, 8–9. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Գուկաս Գ.2, 5–11-ում)

(Հիսուսը տարվեց Հոգու կողմից, այլ ոչ Սատանայի):

1 Այն ժամանակ Հիսուսը Հոգու կողմից տարվեց անապատ, որ Աստծո հետ լինի:

5 Այն ժամանակ Հիսուսը տարվեց սուրբ քաղաք, և Հոգին կանգնեցրեց նրան տաճարի աշտարակի վրա:

6 Ապա դեռ եկավ նրա մոտ և ասաց. Եթե դու Աստծո Որդին ես, ցած գցիր քեզ. որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին կիրամայի քեզ համար. և իրենց ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ, որ չլինի քե երբևէ ոտդ քարին դիպչի:

8 Եվ դարձյալ, Հիսուսը Հոգուն էր, և այն բարձրացրեց նրան շատ բարձր մի սար, և նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը:

9 Եվ դեռ կրկին եկավ նրա մոտ և ասաց. Այս բոլորը ես կտամ քեզ, եթե ընկնես ու երկրպագես ինձ:

Փակագծերում ձեր Աստվածաշնչի հղումն է, որի հետ դուք պետք է համեմատեք Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը:

Այս հաղորդագրությունը բացատրում է, թե ինչ վարդապետություն է պարզաբանել Ջոզեֆ Սմիթն իր թարգմանությանը:

Սա տեքստն է, ինչպես որ Ջոզեֆ Սմիթը թարգմանել է այն:

Որոշ լեզուներով Ջոզեֆ Սմիթի թարգմանության հատվածները կարելի է գտնել Աստվածաշնչի՝ Վերջին Օրերի Սրբերի հրատարակության Էջատակերի ծանոթագրություններում կամ թվային սարքերում «Անչլիոլ բովանդակություն» բաժնում:

Կարդացեք Աստվածաշնչի հետևյալ հատվածները, ապա օգտագործեք Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը՝ ներշնչված փոփոխությունները բացահայտելու համար:

Հովհաննես 1.16–18 (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 1.16–19)

Հովհաննես 4.24 (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 4.26)

Հովհաննես 6.44, (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 6.44)

- Այդ ոգեշնչված փոփոխություններն ի՞նչ են ուսուցանում ձեզ Հիսուս Քրիստոսի մասին
- Ինչո՞ւ է օրհնություն այս բաներն ավելի լավ հասկանալու: